ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՎ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Թեստը բաղկացած է 31 առաջադրանքից, որոնք, ըստ առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ՝

տեսակը	**քանակը**	**միավորը**
ընտրովի պատասխանով	25	25
կարճ պատասխանով	5	8
ընդարձակ պատասխանով	1	2
ընդամենը	31	35

Հայոց լեզվի առաջադրանքները ընդգրկում են լեզվի այն բոլոր բաժինները, որոնք ուսումնասիրվում են 5–9–րդ դասարաններում, գրականության առաջադրանքները կազմվում են 7–9–րդ դասարանների «Հայ գրականություն» դասագրքերում ամփոփված ծրագրային նյութի հիման վրա: Ստորև տրվում են այն հեղինակները և ստեղծագործությունները, գրականագիտական հասկացությունները, որոնց վերաբերյալ կարող են առաջադրանքներ կազմվել[1]:

Եղիշե Չարենց	«Տաղ անձնական», «Ես իմ անուշ Հայաստանի»*[2]
Դերենիկ Դեմիրճյան	«Ավելորդը»
Ակսել Բակունց	«Սպիտակ ձին»
Հովհաննես Շիրազ	«Թագադրում», «Հայ ժողովրդի երգը», «Էքսպրոմտ»
Համո Սահյան	«Անունդ տալիս», «Ուր որ նայում եմ», «Իմ քարափներն ու ես»

[1] Գրականության ցանկը կազմելիս հաշվի են առնվել նոր ծրագրերը:
[2] Աստղանիշով նշված են անգիր սովորելու համար հանձնարարվող բանաստեղծությունները կամ հատվածները:

Պարույր Սևակ	«Վարք մեծաց», «Արվեստ»
Հրանտ Մաթևոսյան	«Կանաչ դաշտը»
Վիլյամ Սարոյան	«Իմ սիրտը լեռներում է» (դասագրքի հատվածները)
Գաբրիել Սունդուկյան	«Պեպո» (դասագրքի հատվածները)
Ռաֆֆի	«Խենթը» (դասագրքի հատվածները)
Պետրոս Դուրյան	«Սիրել», «Լճակ»
Մուրացան	«Հասարակաց որդեգիրը»
Շիրվանզադե	«Արտիստը» (դասագրքի հատվածները)
Նար–Դոս	«Ես և նա»
Հովհաննես Թումանյան	«Թմկաբերդի առումը». Նախերգանք*, «Փարվանա» («Էսպես անցան շատ տարիներ…. տողից մինչև վերջ)*, «Սասունցի Դավիթ», «Հայրենիքիս հետ», քառյակներ(դասագրքում տրվածները)
Ավետիք Իսահակյան	«Մի մրահոն աղջիկ տեսա»*, «Ռավեննայում»*, «Հավերժական սերը», «Սաադիի վերջին գարունը»
Գրիգոր Զոհրապ	«Այրին»
Դանիել Վարուժան	«Զոն»*, «Ցորյանի ծովեր»
Միսաք Մեծարենց	«Երազ օրեր», «Սիրերգ»*, «Աքասիաներու շուքին տակ»*
Վահան Տերյան	«Տխրություն»*, «Իմ խաղաղ երեկոն է հիմա»*, «Հրաժեշտի գազել»*, «Երկիր Նաիրի»շարքից՝ «Մի՞թե վերջին պոետն եմ ես»*, «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին»
Մեսրոպ Մաշտոց. նախամաշտոցյան գիր, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը	
Կորյուն, Ագաթանգեղոս, Եղիշե, Ղազար Փարպեցի (ընդհանուր իմացության համար)[3]	
Փավստոս Բուզանդ	«Արշակ և Շապուհ»(դասագրքի հատվածները)
Մովսես Խորենացի	«Հայոց պատմություն» (ընդհանուր իմացության համար), «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Արտաշես և Արտավազդ»
«Սասունցի Դավիթ» (էպոսի համահավաք բնագիրը)	(դասագրքի հատվածները)

[3] Ընդհանուր իմացության համար հանձնարարվող նյութերի դեպքում պետք է կարողանալ ճանաչել երևույթը, հեղինակին, նրա ստեղծագործությունը՝ ժանրը, բովանդակությունը առավել ընդհանուր գծերով:

Գրիգոր Նարեկացի	«Մեղեդի ծննդյան» (աշխարհաբարով)
Նահապետ Քուչակ	«Երբ սերն ի աշխարհս եկավ», «Ես աչք ու դու լույս, հոգի»
Սայաթ–Նովա	«Աշխարումս ախ չիմ քաշի»
Խաչատուր Աբովյան	«Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը»
Միքայել Նալբանդյան	«Ազատություն»*, «Իտալացի աղջկա երգը». առաջին 8 քառատողը*
Ռափայել Պատկանյան	«Օրորոցի երգ»*
Գրականագիտություն	**Գրական մեթոդներ** (ընդհանուր իմացության համար)՝ դասականապաշտություն, գաղափարապաշտություն, իրապաշտություն **Գրական ուղղություններ** (ընդհանուր իմացության համար)՝ խորհրդապաշտություն, զգացապաշտություն **Գրական ժանրեր՝** վեպ, նորավեպ, պատմվածք, թատերգություն. տեսակները՝ ողբերգություն, կատակերգություն, դրամա, պոեմ. տեսակները՝ պատմողական, քնարական, քնարապատմողական, բալլադ, քառյակ **Գրականագիտական հասկացություններ՝** դիպաշար. դրա բաղկացուցիչ մասերը, հանգավորման տեսակները, տաղաչափություն, հանգ, բանաստեղծական կայուն ձևեր՝ տաղ, գազել, սոնետ, տրիոլետ **Ոճագիտական հասկացություններ՝** հռետորական հարց, հռետորական դիմում, հռետորական բացականչություն, բաղաձայնույթ, դիմառնություն,

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ,

ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Անհրաժեշտ է տրված 4 տարբերակներից ընտրել մեկը և պատասխանների ձևաթղթի համապատասխան վանդակում դնել X նշանը: Միևնույն համարի առաջադրանքի սյունակի մեկից ավելի տեղերում կատարված ցանկացած նշման դեպքում այդ առաջադրանքին միավոր չի տրվում: Ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Առաջադրանքների պատասխանները անհրաժեշտ է գրել դրանց համար նախատեսված տողերի վրա:

1. Տրված բայերը դնե՛լ պահանջվող ժամանակաձևով, դեմքով և թվով:

Առաջադրանքը կատարված է համարվում, եթե ճիշտ են կատարված բոլոր երեք պահանջները: Հակառակ դեպքում՝ բայը այլ դեմքով, թվով կամ ժամանակաձևով գրված լինելու դեպքում միավոր չի տրվում: Միավոր չի տրվում նաև այն դեպքում, երբ բայաձևը սխալ է՝ համաձայն տրվող բայի խոնարհման հարացույցի:

Ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

2. Վերադասավորե՛լ տրված նախադասությունները քերականական և տրամաբանական ճիշտ հերթականությամբ:

Անհրաժեշտ է նախադասությունների համարները գրել ճիշտ հերթականությամբ: Նախադասությունների համարների հերթականության ցանկացած խախտման դեպքում միավոր չի տրվում:

Ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

3. Գտնե՛լ և ուղղե՛լ նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը:

Սխալը կարող է լինել ձևաբանական կամ շարահյուսական, օրինակ՝ բառաձևի, համաձայնության, խնդրառության և այլն: Անհրաժեշտ է գտնել սխալը և ուղղել: Առաջադրանքը կատարված է համարվում, եթե ճիշտ են կատարված երկու պահանջներն էլ:

Ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

4. Տրված բառերը տեղադրե՛լ բաց թողած տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Նախադասության մեջ բաց է թողնված 4 բառ: Անհրաժեշտ է դրանցից յուրաքանչյուրը տեղադրել ճիշտ տեղում, այսինքն՝ պատասխանի համար նախատեսված տեղում գրել ճիշտ հերթականությամբ

և համապատասխան փոփոխություններով՝ ըստ նախադասության բովանդակության: Պահանջներից որևէ մեկի սխալ կատարման դեպքում, այսինքն՝ սխալ հերթականության, սխալ բառաձևի և այլն, տվյալ բառի համար նախատեսված 1 միավորը չի տրվում:

Յուրաքանչյուր բառի՝ ճիշտ բառաձևի ճիշտ տեղում տեղադրման համար տրվում է մեկական միավոր, ընդամենը՝ 4 միավոր:

5. Հարցեր գրականությունից:

ա. Պահանջվում է նշել ստեղծագործության կամ դրա հեղինակի անունը՝ ըստ տրված հատվածի, հերոսների անունների կամ ստեղծագործության որևէ բնորոշման: Առաջադրանքը կատարված է համարվում, եթե ճիշտ է նշված հեղինակի կամ և՛ հեղինակի, և՛ ստեղծագործության անունը՝ համաձայն պահանջի: Երկակիության դեպքում ճիշտ է համարվում պահանջին համապատասխանող ցանկացած պատասխան (օրինակ՝ Ո՞ր ստեղծագործությունն է սկսվում ……: Պատասխան՝ «Վերք Հայաստանի» կամ՝«Հառաջաբան»):

բ. Պահանջվում է լրացնել անգիր հանձնարարվող բանաստեղծության բաց թողած բառը կամ տողը:

Ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Այս առաջադրանքների դեպքում ձեռնպահ ենք մնում հարակից սխալները հաշվի առնելուց (օրինակ՝ գրված է ուղղագրական սխալներով կամ բանաստեղծության տողը սխալ է կետադրված):

Ընդարձակ պատասխանով առաջադրանք

Անհրաժեշտ է տրված տեքստի համար գրել սկիզբ 2–3 (կամ 1 ծավալուն) նախադասությամբ, նվազագույնը 20 բառով: Առաջադրանքին տրվում է առավելագույնը 2 միավոր այն դեպքում, եթե գրվածը իմաստով բխում է տրված տեքստի բովանդակությունից և շարադրված է առանց ուղղագրական, կետադրական, բառագործածության և քերականական սխալների:

Եթե գրվածը համապատասխանում է տեքստի բավանդակությանը, սակայն թույլ է տրված մինչև որևէ 2 սխալ, առաջադրանքին տրվում է 1 միավոր: 3 և ավելի սխալների դեպքում միավոր չի տրվում:

Տեքստի բովանդակության հետ չկապված շարադրանքին միավոր չի տրվում անգամ այն դեպքում, եթե շարադրանքում վերը նշված սխալները չկան: